

Հարցաթերթ

**Աշխարհագրություն ատարկայի 2019 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)**

9 – րդ դասարան

1. Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը կլինի $+3^{\circ}\text{C}$, եթե նույն պահին Արագածի գագաթին -6°C է (յուրաքանչյուր 1000 մ –ին օդի ջերմաստիճանի փոփոխությունն ընդունել 6°).....2 միավոր
2. Երկրի բնակչության թիվը 20 մլն է, գյուղական բնակչության թիվը՝ 4 մլն մարդ:
Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը կազմում է 300 000 մարդ.....2 միավոր
 1. Որոշել ուրբանիզացման մակարդակը:
 2. Որոշել ծնելիության գործակիցը:
3. Տրված գուգորդություններից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 1. բարեխառն ցամաքային կլիմա - շյուղախոտ, փետրախոտ - պողոզլային հող
 2. սավանա - ակացիա, բաոբաբ - գորշ արջ, խլահավ
 3. միջերկրածովային կլիմա - խցանակաղնի, ձիթենի - դարչնագույն հող
 4. տափաստան - սիզախոտ, երեքնուկ - դաշտամուկ, ճնճղուկ
 5. բարեխառն ծովային կլիմա - կաղնի, հաճարենի - գորշ անտառային հող
 6. տայգա - եղևնի, խեժափիճի - այծքաղ, առյուծ,
4. Ծովային հոսանքների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 1. Ատլանտյան օվկիանոսի փոխհատուցման հոսանքներից են Կանարյանը և Բենգեյանը:
 2. Ծովային հոսանքների առաջացման գլխավոր պատճառը արևմտյան քամիներն են:
 3. Կուրո Սիո տաք հոսանքը շեղվում է իր նախնական ուղղությունից աջ, իսկ Գոլֆստրիմը՝ ձախ:
 4. Հնդկական օվկիանոսում Հարավ պասսատային հոսանքի ճյուղերից են Մոզամբիկի և Ասեդի հոսանքները:
 5. Լաբրադորյան և Ֆոլկլենդյան տաք հոսանքները ձևավորվում են Ատլանտյան օվկիանոսում:
 6. Մուսսոնային տաք հոսանքը ձևավորվում է Խաղաղ օվկիանոսում:
5. Իրանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 1. Պարսկերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին:
 2. Իրանի բնակչության գերակշիռ մասը դավանում է իսլամի սուննի ուղղությանը:
 3. Իրանի սև մետաղածուլության խոշոր կենտրոնը Սպահանն է:
 4. Հարավկասպիական դաշտավայրը երկրի ամենախոնավ շրջանն է:
 5. Ըստ պետական կարգի նախագահական հանրապետություն է:
 6. Նավթավերամշակման խոշոր կենտրոնը Աբադանն է, որը գտնվում է Օմանի ծոցի ափին:
6. Գրե՛լ նշված պետությունների ճիշտ շարքն՝ ըստ բնակչության թվի աճման հաջորդականության.....2 միավոր
Իտալիա, Բելգիա, Հարավ Աֆրիկյան հանրապետություն,
Գերմանիա, Ավստրալիա, Ղազախստան, Մեքսիկա, Կանադա:
7. Աղյուսակում տրված են ՀՀ բնակչության բաշխման վերընթաց գոտիները և դրանց բարձրությունների միջակայքը:
Գրե՛լ աղյուսակի համապատասխան ցուցանիշները.....1,5 միավոր

ՀՀ բնակչության բաշխման վերընթաց գոտիները և բարձրությունների միջակայքը (մետր)	Գոտում բնակվող բնակչությունը (%)	Գոտու տարածքի զբաղեցրած մակերեսը (%)
Առաջին գոտի (400 - 1000)		
Երկրորդ գոտի (1000 - 1500)		
Երրորդ գոտի (1500 - 4090)		
Ընդամենը	100	100

8. Երկրագնդի ո՞ր կիսագունդն է ավելի շատ ջերմություն ստանում Արեգակից : Ինչու՞, բացատրե՛լ: Ո՞ր բևեռն է Արեգակից ավելի շատ լուսավորվում՝ հյուսիսայինը, թե՞ հարավայինը: Ինչու՞, բացատրե՛լ.....2 միավոր

9. Գրել այն երկրները, որոնց պատկանում են հետևյալ աշխարհագրական օբյեկտները.....2 միավոր

- | | |
|-----------------------------|-----------------------|
| 1. Մուրբ Հեղինե կղզի | 5. Մոլուքյան կղզիներ |
| 2. Ազոբյան կղզիներ | 6. Լակադիվյան կղզիներ |
| 3. Հայնան կղզի | 7. Լիպարյան կղզիներ |
| 4. Խուան Ֆերնանդեսի կղզիներ | 8. Սպորադյան կղզիներ: |

10. Կազմել «մշակաբույս – մշակության մասնագիտացված երկիր» համապատասխան զույգերը.....2 միավոր
 եգիպտացորեն, իսպող, բամբակ, թեյ, համեմունք, սուրճ, կակաո, արախիս

Հնդկաստան, ԱՄՆ, Բրազիլիա, Կոտ դ' Իվուար, Ինդոնեզիա, Շրի Լանկա, Իտալիա, Չինաստան:

11. Որո՞նք են Բալթիկ և Կարմիր ծովերի աղիության տարբերությունների պատճառները.....2 միավոր

Պատասխաններ
 2019թ. հանրապետական փուլի
 / գնահատման քայլը – 0,25 և 0,5 միավոր /

9 - րդ դասարան

1. Արագածի գագաթի բարձրությունը 4090 մ է: Գագաթի և պահանջվող բարձրության միջև ջերմաստիճանի տատանումը 9°C է ($+ 3^{\circ}\text{C} - (- 6^{\circ}\text{C}) = 9^{\circ}\text{C}$, իսկ 9°C –ին համապատասխանում է 1500 մետր (յուրաքանչյուր 1000 մ –ին 6°C): Հետևաբար՝ $4090\text{ մ} - 1500\text{ մ} = 2590\text{ մ}$:
 Պատասխան՝ 2590 մ:

2. 1. Ուրբանիզացման մակարդակը՝ 80 %: 2. Ծնելիության գործակիցը՝ 15 ‰:

3. 1. սխալ է, 2. սխալ է, 3. ճիշտ է, 4. ճիշտ է, 5. ճիշտ է, 6. սխալ է

4. 1. ճիշտ է, 2. սխալ է, 3. սխալ է, 4. ճիշտ է, 5. սխալ է, 6. սխալ է:

5. 1. ճիշտ է, 2. սխալ է, 3. ճիշտ է, 4. ճիշտ է, 5. սխալ է, 6. սխալ է:

6. Բելգիա, Ղազախստան, Ավստրալիա, Կանադա, Հարավ Աֆրիկյան Հանրապետություն, Իտալիա, Գերմանիա, Մեքսիկա:

7.

ՀՀ բնակչության բաշխման վերընթաց գոտիները և բարձրությունների միջակայքը (մետր)	Գոտում բնակվող բնակչությունը (%)	Գոտու տարածքի զբաղեցրած մակերեսը (%)
Առաջին գոտի (400 - 1000)	54	10
Երկրորդ գոտի (1000 - 1500)	18	20
Երրորդ գոտի (1500 - 4090)	28	70
Ընդամենը	100	100

8. Արեգակի շուրջ Երկրի պտույտը կատարվում է էլիպսաձև ուղեծրով: Հեռակետը դիտվում է հուլիսի 5 –ին, երբ Երկիրն Արեգակից հեռու է 152 մլն կմ, իսկ մերձակետը՝ հունվարի 3 –ին (147 մլն կմ): Մերձակետով Երկիրն անցնում է հարավային կիսագնդով, Արեգակին ավելի է մոտենում և հետևաբար, ստանում է ավելի շատ ջերմություն:

Էլիպսաձև ուղեծրի պատճառով մարտի 21 –ից մինչև սեպտեմբերի 23 –ը հյուսիսային բևեռը 2 օր ավելի շատ է լուսավորվում, քան հարավային բևեռը, որն Արեգակին է ուղղված սեպտեմբերի 23 –ից մինչև մարտի 21 –ը:

9. 1. Սուրբ Հեղինե կղզի - Մեծ Բրիտանիա
2. Ագոբյան կղզիներ - Պորտուգալիա
3. Հայնան - Չինաստան
4. Խուան Ֆերնանդեսի կղզիներ - Չիլի
5. Մոլուքյան կղզիներ - Ինդոնեզիա
6. Լակադիվյան կղզիներ - Հնդկաստան
7. Լիպարյան կղզիներ - Իտալիա
8. Սպորադյան կղզիներ - Հունաստան

10. Եգիպտացորեն – ԱՄՆ, խաղող – Իտալիա, բամբակ – Չինաստան, թեյ – Շրի Լանկա, համեմունք – Ինդոնեզիա, սուրճ – Բրազիլիա, կակաո – Կոտ Դ' Իվուար, արախիս – Հնդկաստան:

11. **Բալթիկ ծովը** գտնվում է բարեխառն գոտու արևմտյան մասում: Այստեղ տեղումները շատ են, գետերով ստանում է շատ քաղցրահամ ջուր, իսկ գոլորշացումը քիչ է: Այդ պատճառով այն ամենաքաղցրահամ ծովն է (միջին աղիությունը 8 - 12 ‰, իսկ Ֆիննական ծոցում՝ 3 - 5 ‰):

Կարմիր ծովը գտնվում է արևադարձային գոտում, շրջապատված է անապատներով: Մթնոլորտային տեղումները շատ քիչ են, գետերով քաղցրահամ ջուր համարյա չի ստանում և չափազանց մեծ է գոլորշացումը: Ջրափոխանակությունը օվկիանոսի հետ Բաբ – Էլ – Մանդեբի նեղուցով թույլ է: Հետևաբար, այն աշխարհի ամենաաղի ծովն է (մինչև 41-42 ‰):